# ԱՎԱՐՏԱԾԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ ավարտաճառերի հերթական պաշտպանություն: Վեց ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտական աշխատանքները՝ հետևյալ թեմաներով. «Գրիգոր Խլաթեցու «Բնագրական նշմարների» լեզուն՝ հայերենի պատմական զարգացման կտրվածքով» (Մհեր սրկ. Ծատուրյան, ղեկ.՝ Պետրոս Բեդիրյան - բանասիր. գիտ. դոկտ., պրոֆ.), «Հռոմի և Կոստանդնուպոլսի հարաբերությունները 9-11-րդ դարերում. 1054 թ. եկեղեցական բաժանումը» (Արթուր սրկ. Պետրոսյան, ղեկ.՝ Ավետիս Քալաշյան - պատմ. գիտ. թեկն., դոցենտ), «Ազգագրական սովորույթներ՝ առնչված Մկրտության և Սուրբ Պսակի խորհուրդների հետ» (Հովհաննես սրկ. Ռուշանյան, ղեկ.՝ Պողոս Խաչատրյան - բանասիր. գիտ. դոկտ., պրոֆ.), «Մանազկերտը հայ-արաբական և հայ-բյուզանդական հարաբերությունների ոլորտում 9-11-րդ դարերում» (Վաղինակ սրկ. Հովհաննիսյան, ղեկ.՝ Գնել Գրիգորյան - պատմ. գիտ. թեկն.), «Երրորդութենական վարդապետության սկզբնավորումն ու նախնական զարգացումը» (Վաչիկ սրկ. Ջարգարյան, ղեկ.՝ Տ. Բագրատ վրդ. Գալստանյան) և «Հովհան Օձնեցու «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն և նրա հետագա խմբագրությունները» (Արիստակես սրկ. Նավասարդյան, ղեկ.՝ Ռաֆիկ Վարդանյան - պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.):

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*